ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

МАТЕРИАЛЫ ЮБИЛЕЙНОЙ НАУЧНОЙ СЕССИИ, ПОСВЯЩЕННОЙ 95-ЛЕТИЮ ОСНОВАНИЯ ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

MATERIALS OF THE SCIENTIFIC SESSION DEDICATED TO THE 95TH ANNIVERSARY OF YSU

1.3 (6)

Общественные науки - Social sciencies

(Армянская филология) - (Armenian Philology)

ЕРЕВАН - YEREVAN

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS

2015

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829-4367

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 95-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ

1.3 (6)

Հասարակական գիտություններ
(Հայ բանասիրություն)

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2015

Հրատարակվում է
ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издается по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ. գ. դ., պրոֆ. Վ. Գաբրիելյան
բ. գ. թ., դոց. Հ. Համբարձումյան
բ. գ. թ., դոց. Ն. Դիլբարյան
բ. գ. թ., դոց. Վ. Պետրոսյան
բ. գ. թ., ասիստ. Ա. Մովսիսյան

Редакционная коллегия:

д. ф. н., проф. В. Габриелян
к. ф. н., доц. А. Амбарцумян
к. ф. н., доц. Н. Дилбарян
к. ф. н., доц. В. Петросян
к. ф. н., асист. А. Мовсисян

Editorial Board

DSc, prof. V. Gabrielyan
PhD, associate prof. H. Hambardzumyan
PhD, associate prof. N. Dilbaryan
PhD, associate prof. V. Petrosyan
PhD, assist. A. Movsisyan

Հրատ. պատասխանատու խմբագիր՝ ***Մ. Մալխասյան***

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55-55-70, publishing@ysu.am
Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական գիտական ընկերություն
Հասցե՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 1, (+37460) 71-01-94, ssspub@ysu.am, sss@ysu.am
ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ ssspub.ysu.am

Հռիփսիմե Կոստանյան
ԵՊՀ, Հայ բանասիրության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող
Գիտ. ղեկավար՝ բ.գ.թ., դոց. Ն. Պողոսյան
Էլ. փոստ՝ hripsime.kostanyan@yahoo.com

«ԱՂԲՅՈՒՐ» ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայերենի բազմահազար տեղանունների մեջ իրենց տարածվածությամբ, իմաստային բազմազանությամբ աչքի են ընկնում տեղանվանակերտ մի շարք բաղադրիչներ ու հիմքեր: Դրանց շարքում առավել գեղեցիկ են «աղբյուր» բաղադրիչով կազմվածները: Ներկա քննության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել «աղբյուր» բաղադրիչով հայերեն տեղանունները՝ դասակարգելով ըստ կազմության, բնույթի և դրանց մասին պահպանված ավանդության: Քննության նյութը քաղել ենք հիմնականում «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ից[1]:

Ըստ կազմության՝ մեր դուրս գրած տեղանունները բաժանվում են հինգ հիմնական խմբի՝ պարզ, ածանցավոր, բարդ, բարդ ածանցավոր և հարադիր կազմության:

Պարզ են այն տեղանունները, որոնք կազմված են միայն մեկ արմատից, հաճախ ասվում են նաև մենաբառ: Մեր քննած բառերի մեջ նման մեկ դեպք է ընդամենը հանդիպել, որն էլ հենց Աղբյուր կոչվող բնակավայրն է:

Ածանցավոր են այն տեղանունները, որոնք կազմված են մեկ հիմքից կամ արմատից և մեկից ավելի ածանցներից, որոնցից են՝ Աղբյուրակ, Աղբյուրիկ:

Բարդ են այն տեղանունները, որոնք կազմված են երկու և ավելի հիմքերից կամ արմատներից: Այս դեպքում բառակազմական հիմքերի բաղադրիչները անտեսում ենք՝ հաշվի առնելով, որ դրանք տեղանուն են կերտում իբրև առաջնային հիմքեր: Իրենց հերթին դրանք լինում են հոդակապավոր և անհոդակապ: Քանի որ աղբյուր բաղադրիչը կազմում է երկրորդ հիմքը, այսինքն՝ հետադաս է, այդ իսկ պատճառով բարդ բառերը կազմվում են առանց *ա* հոդակապի, օրինակ՝ Լուսաղբյուր, Սառնաղբյուր, Վարդաղբյուր, Շոռաղբյուր և այլն:

Բարդ բառերը փորձել ենք դասակարգել ըստ կազմության կաղապարի, այսինքն՝ ըստ առաջին բաղադրիչի խոսքի մասային պատկանելության:

«Գոյական+գոյական» կազմությունը մեծամասնությունն է, որի մեջ կան.

- առաջին բաղադրիչը տեղանվանակերտ հիմք է. Լանջ+աղբյուր, Ակ+աղբյուր, Գյոլ+աղբյուր, Շեն+աղբյուր, Ձոր+աղբյուր, Սարի+աղբյուր, Գեղ+աղբյուր, Խաչ+աղբյուր, Պոզ+աղբյուր,
- որևէ այլ գոյական է. Աղ+աղբյուր, Ավազ+աղբյուր, Արեն+աղբյուր, Լուս+աղբյուր, Մոշ+աղբյուր, Տերև+աղբյուր, Հով+աղբյուր, Երկաթ+աղբյուր, Արծաթ+աղբյուր,
- անձնանուն. օրինակ՝ Թորոս+աղբյուր, Վառամ+աղբյուր, Պապ+աղբյուր,
- կենդանիների անուններ. Արջն+աղբյուր, Շն+աղբյուր, Կաքավ+աղբյուր, Ուլ+աղբյուր:

«Ածական+գոյական» կազմությունը նույնպես հանդիպում է, որի մեջ առանձնացրել ենք երկու խումբ.

---

[1] **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.,** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1-5, Երևան, 1986-2002: Այսուհետև՝ ՀՀՏԲ:

- որակական կամ հարաբերական ածականներ, օրինակ՝ Ջերմ+աղբյուր, Նոր+աղբյուր, Սառն+աղբյուր, Բարակ+աղբյուր, Կարճ+աղբյուր, Բազմ+աղբյուր, Տաք+աղբյուր,
- գունանուններ, օրինակ՝ Դեղին+աղբյուր, Ճերմակ+աղբյուր, Սպիտակ+աղբյուր Սև+աղբյուր, Շեկ+աղբյուր:

«Կապ+գոյական» կազմության մեկ օրինակ է հանդիպել, օրինակ՝ Տակ+ախպյուր, հնարավոր է, իհարկե, այն կազմված է տաք>բաղադրիչով:

Բարդ բառերի շարքում հետաքրքրություն է ներկայացնում Անաշաղբյուր կոչվող գյուղը, որն ամենայն հավանականությամբ Անուշ աղբյուր պետք է կոչված լինի:

Բարդ ածանցավոր են այն տեղանունները, որոնք կազմված են երկու հիմքից կամ արմատից և մեկ ածանցից՝ Նորաղբյուրիկ:

Հարադիր տեղանունները կազմված են երկու և ավելի միմյանցից անջատ գրվող բառերից, ընդ որում աղբյուր բաղադրիչը կարող է լինել նախադաս կամ ետադաս, եռաբաղադրիչ բարդության դեպքում՝ նաև միջադաս: Այդպիսիք են՝

Երկբաղադրիչ. Աղբյուրակ Վերին, Աղբյուրի դուռ, Աղբյուրի սար, Աղոթիքի աղբյուր, Անմահության աղբյուր, Գաստոնի աղբյուր, Գըռիձորի աղբյուրներ, Գողոց աղբյուր, Եղին աղբյուր, Զոռզոռ աղբյուր և այլն:

Եռաբաղադրիչ. Գագիկ թագավորի աղբյուր, Թարգմանչաց վանքի աղբյուր, Խազալ կապի աղբյուր, Սպիտակ աղբյուրի խաչ, Քառսուն մանկանց աղբյուր:

Հանդիպում են նաև սակավաթիվ բազմաբաղադրիչ բառեր՝ Գեչիկ գյադուկի շոռ աղբյուր:

Անվանումների մեջ առանձնացրել ենք մի խումբ, որոնք կիրառվում են բաղադրիչների հնչյունափոխված և անհնչյունափոխ զուգահեռ տարբերակներով.

- Լիսաղբյուր (աղբյուր, ուխտատեղի), Լուսաղբյուր (աղբյուր),
- Նորախպյուր (գյուղ), Նորաղբյուր (գյուղ),
- Շոռաղբյուր (լեռնագագաթ), Շորաղբյուր (գյուղ), Շորաղբյուր (հանքային աղբյուր),
- Սառնախպյուր (գետ), Սառնախպյուր (գյուղ), Սառնախպյուր (գյուղ), Սառն աղբյուր (աղբյուր), Սառնաղբյուր (գետ), Սառնաղբյուր (գետակ), Սառնաղբյուր (գյուղ), Սառնաղբյուր (գյուղ), Սառնաղբյուր (գյուղատեղի), Սառնաղբյուր (լեռնագագաթ), Սառնաղբյուր (վայր),
- Վարդախպյուր (գյուղ), Վարդաղբյուր (գետակ), Վարդաղբյուր (գյուղ), Վարդաղբյուր (գյուղ),
- Վարժակա աղբյուր (գյուղ), Վարժակաց աղբյուր (գյուղ), Վարժակի աղբյուր (գյուղ), Վարժանկա աղբյուր (գյուղ), Վարժանկե աղբյուր (գյուղ):

Այս կազմության տեղանուններով հայերենում անվանադրվում են ֆիզիկաաշխարհագրական վայրերի, պատմական օբյեկտների, բնակավայրերի գրեթե բոլոր տեսակները: Ըստ բնույթի տեղանունները բաժանել ենք հետևյալ խմբերի.

1. Լեռներ, լեռնաբազուկներ, լեռնագագաթներ, ձմեռանոցներ.

Կռընն աղբրիկ (լեռ), Կաքավաղբյուր (ձմեռանոց), Ճոկնու աղբյուր (լեռնաբազուկ), Սիլաղբյուր (լեռնագագաթ), Սպիտակաղբյուր (ձմեռանոց), Սպիտակ աղբյուր (ձմեռանոց), Ուլաղբյուր (լեռնագագաթ), Գյոլաղբյուր (ձմեռանոց):

2. Քարայրներ, ձորեր, հովիտներ, գոգավորություններ.

Ճոկնու աղբյուր (ձոր), Աղբյուրների ձոր (գոգավորություն), Ավեղ աղբյուր (հովիտ):

3. Լճեր, գետեր, ջրանցքներ, աղբյուրներ, ջրամբարներ.

Բարակաղբյուր (գետակ), Արզնիի աղբյուրներ (հանքային աղբյուրներ), Արքայության աղբյուր (աղբյուր), Բերդերու աղբյուր (աղբյուր), Բերդի աղբյուր (աղբյուր), Բո-

ժանա աղբյուրներ (աղբյուրներ), Կենարար աղբյուր (աղբյուր-հուշարձան), Կոստնտուտի աղբյուր (աղբյուր), Կովհովիվի աղբյուր (աղբյուր), Կորեկի աղբյուր (աղբյուր), Կուրաղբյուր (լիճ), Հալճից աղբյուր (աղբյուր), Հարեմ աղբյուր (աղբյուր), Հյուսեինաղա աղբյուր (աղբյուր), Հոռնաղբյուր (աղբյուր), Հովաղբյուր (աղբյուր), «Հորթերի աղբյուր» (աղբյուր), Ղզըլչախչախի աղբյուր (աղբյուր), Մամուշեղի աղբյուր (աղբյուր), Մարղուլի աղբյուր (աղբյուր), Մեծ աղբյուր (աղբյուր), Մկնխոռու աղբյուր (աղբյուր), Մոշահավի աղբյուր (աղբյուր), Մոշաղբյուր (աղբյուր), Մոտիկ աղբյուր (աղբյուր), Մորուք աղբյուր (աղբյուր), Մուխալ աղբյուր (աղբյուր), Մուշաղբյուր (գետակ), Յոթականի աղբյուր (աղբյուր), Յոթն ախպոր աղբյուր (աղբյուր), Յոթն աղբյուրներ (աղբյուրներ), Նավավորի աղբյուր (աղբյուր), Նվեր աղբյուր (աղբյուր), Շաղասարի աղբյուր (աղբյուր), Շատ աղբյուր (աղբյուր), Շորշորի աղբյուր (աղբյուրներ), Սառնաղբյուրի ջրամբար (ջրամբար):

4. Գավառներ, քաղաքներ, գյուղեր.

Անուշ աղբյուր (գյուղ), Ավեղ աղբյուր (գյուղ), Կարճաղբյուր (գյուղ), Կարմիրաղբյուր Ներքին (գյուղ), Կարմիրաղբյուր Վերին (գյուղ), Կաքավուց աղբյուր (գյուղ), Կորաղբյուր (գյուղ), Հացյաց աղբյուր (գյուղ), Հոտած աղբյուր (գյուղ), Մուշաղբյուր (գյուղ), Մուշեղաղբյուր (գյուղ), Յոթաղբյուրներ (գյուղ), Նորաղբյուրիկ (գյուղ), Շենաղբյուր (գյուղ), Շնաղբյուր (գյուղ), Շողան աղբյուր (գյուղատեղի):

5. Կամուրջներ. Պաղաղբյուր:

6. Վանքեր, սրբավայրեր, եկեղեցիներ, ուխտատեղիներ.

Մանուկ աղբյուր (վայր, սրբավայր), Մանուկյանների աղբյուր (սրբավայր), Միջնաղբյուրի վանք (վանք), Մկաց աղբյուր (սրբավայր), Ջերմաղբյուր (վանք), Ջերմաղբյուրի Ս. Աստվածածին (վանք), Սպիտակ աղբյուրի խաչ (եկեղեցի), Սպիտակ աղբյուրի վանք (վանք), Վանքի լուսաղբյուր (ուխտատեղի), Տապաս աղբիւր (ուխտատեղի), Գառնիկ աղբյուր (ուխտատեղի), Դող աղբյուր (ուխտավայր):

Հայերենում միևնույն անունով կարող են անվանվել տարբեր օբյեկտներ: Դա նկատելի է նաև մեր քննած տեղանունների դեպքում.

- Ակնաղբյուր՝ գետակ և գյուղ,
- Ավզաղբյուր՝ գյուղ և գետակ,
- Բազմաղբյուր՝ ամրոց, ավան և գյուղ,
- Երկաթաղբյուր՝ աղբյուր և լեռ,
- Զույգ աղբյուր՝ աղբյուր, ավան, գյուղ, հնավայր,
- Լուսաղբյուր՝ աղբյուր, բլուր, գետակ, գյուղ, ողողատ, ուխտատեղի,
- Խաչաղբյուր՝ ավերակ գյուղ, ամառանոց, գետ, լեռնագագաթ, ուխտատեղի,
- Կարմիր աղբյուր՝ աղբյուր, գետակ, գյուղ,
- Կաքավաղբյուր՝ աղբյուր, ձմեռանոց,
- Զորաղբյուր՝ գետակ, գյուղ,
- Ճոկնու աղբյուր՝ լեռնաբազուկ, ձոր,
- Շեկաղբյուր՝ գյուղատեղի, լեռնագագաթ,
- Պաղաղբյուր՝ աղբյուր, գյուղ, լեռնագագաթ,
- Սարիաղբյուր՝ գետ, լեռ,
- Սև աղբյուր՝ ագարակ, գյուղ, գյուղակ, աղբյուր, գետակ,
- Սպիտակ աղբյուր՝ աղբյուր, գետակ, գյուղ, ձմեռանոց,
- Տաքաղբյուր՝ աղբյուր, գետ,
- Ցուրտ աղբյուր՝ աղբյուր, գյուղատեղի:

Բազմաթիվ գեղեցիկ ավանդություններ են կապված աղբյուր բաղադրիչով տեղանունների հետ: Այստեղ նշել ենք տեղանունը և կողքին էլ ավանդապատումը,

որոնք բաժանել ենք մի քանի պայմանական խմբերի: Դրանք քաղել ենք հիմնականում «Ավանդապատումից» և ՀՀՏԲ-ից, ուստի առանձին-առանձին հղումներ չենք արել:

1. Ժողովրդական զրույցներ:

• **Ագռավի աղբյուր** (աղբյուր): Տեղացիներն այս աղբյուրի անվան առաջացումը բացատրում են Գրիգոր Տաթևացու հետ կապված մի ավանդությամբ: Ավանդության համաձայն՝ Գր. Տաթևացին երեխա ժամանակ Տաթևի վանքի գառներն արածեցնելիս, մի օր այդ աղբյուրից ջուր խմելու ժամանակ, օձն ուզում է նրան խայթել: Տեսնելով այդ՝ ագռավն իրեն նետում է աղբյուրի մեջ: Օձը Գրիգորի փոխարեն խայթում է ագռավին: Տաթևի վանահայրը անձնազոհ ագռավին թաղում է աղբյուրի մոտ և նրա անունը դնում Ագռավի աղբյուր:

• **Կարճաղբյուր** (գետ): Ժողովրդական ավանդության համաձայն գյուղն այսպես է կոչվել, որովհետև ժայռի խոռոչից բխող աղբյուրը՝ կարճ ճանապարհ անցնելով թափվում է լիճը:

• **Աղմաղանի աղբյուրներ** (աղբյուրներ): Այստեղ ժամանակին բազմաթիվ աղբյուրներ են եղել: Նաղի խանը ուղտերի քարավանով բուրդ է կրել տալիս և խցկում բոլոր աղբյուրների ակունքները, որպեսզի իր հակառակորդները աչք չդնեն այդ ջրառատ վայրերին:

• **Կաքավի աղբյուր** (աղբյուր): Մի որսկան այստեղ կաքավի բուն է գտնում՝ ձագերը միջին: Սատանայի թելադրանքով նա քանդում է բունը և ոչնչացնում կաքավի ձագերին: Մայր կաքավը տեսնելով ավերված բունն ու ոչնչացված ձագերին, սկսում է սուգ ու լաց անել: Նրա արտասուքներից աղբյուր է գոյանում, ինքն էլ շատ չանցած անշնչանում է: Բարեխիղճ մարդիկ թաղում են կաքավին, քար գցում գերեզմանին, քարի տակից նով անցկացնում, որից սկսում է հոսել այս սառն աղբյուրը:

• **Մահտեսի Մելքումի աղբյուր** (աղբյուր): Շահ-Աբասը, հավանելով Մահտեսի Մելքումի գեղեցիկ կնոջը, նրան բռնությամբ տանում է իր հարեմը: Ժամանակ անց, կարոտելով կնոջը, Մելքումը գնում է Սպահան և ծպտված սկսում է իբրև որմնադիր աշխատել շահի պալատի մոտ: Շահ-Աբասն ու կինը դուրս են գալիս պատշգամբ նարդի խաղալու: Մելքումը կնոջ ուշադրությունը գրավելու համար երգով մրմնջում է. «Հին դարդերս նորոգվեցին, այ տղա կիր բեր»: Կինը, ճանաչելով ամուսնուն, նետում է զառը և երգով պատասխանում. «Անցյալը պետք է մոռանալ, ա՛յ թե զառս հինգ ու վեց գար»:

Շահը կասկածում է այդ խորհրդավոր հարց ու պատասխանին և փորձելու համար թույլ է տալիս կնոջը կես ժամով տեսակցել ամուսնու հետ: Հասկանալով այդ, Մելքումի կինը խորհուրդ է տալիս ամուսնուն՝ հեռանալ շահի պալատի մոտից, և իր հոգու փրկության համար յոթ եկեղեցի և յոթ աղբյուր շինել: Մելքումը կատարում է կնոջ ցանկությունը: Ներքին Ագուլիսի Դաշտի բազարի մոտ գտնվող աղբյուրը՝ այդ յոթ աղբյուրներից մեկն է, որը շինողի անունով կոչվում է Մահտեսի Մելքումի աղբյուր:

• **Մարաշի աղբյուրներ** (աղբյուրներ): Ժամանակին թաթարները հարձակվում են Մարաշի վրա և թալանում ու կոտորում: Հանկարծ տեղատարափ անձրև է սկսվում և հեղեղում է քաղաքի բոլոր փողոցները: Օգտվելով դրանից մարաշցիք հարձակվում են թաթարների վրա և դուրս վռնդում նրանց քաղաքից: Երբ ամեն ինչ խաղաղվում է, մարաշցիք վախենալով, որ թաթարները կարող են նորից վերադառնալ, թողնում են քաղաքը և բարձրանում մոտակա լեռան գագաթը: Այստեղ նորից հեղեղանման անձրև է տեղում որոտումներով և կայծակներով: Երբ ամեն ինչ հանդարտվում է, մարաշցիք իջնում են քաղաք, ուր երկու նոր աղբյուր են գտնում:

• **Արեգի աղբյուրները** (աղբյուրներ)։ Այս աղբյուրների ջրերը կենարար են և զավակատուր։ Արու զավակ ունենալ ցանկացողները խմում են արևելյան ակից, իսկ աղջիկ ուզողները՝ արևմտյանից։ Դրանից էլ ծագել է աղբյուրների Արեգի (արուի և էգի) անունը։

• **Ականջացավի աղբյուր** (աղբյուր)։ Այստեղ ապրելիս է եղել մի ճգնավոր։ Հոգեվարքի ժամանակ նա հովվին ուղարկել է դիմացի այրում գտնվող վարդապետի մոտ, որպեսզի հաղորդություն ստանա նրանից։ Վարդապետը չի եկել։ Ճգնավորի անեծքով նա քար է դարձել և բերանից սկսել է հոսել Մոկս գետը։ Տեսնելով, որ աստված կատարեց իր խնդիրքը, ճգնավորը խնդրել է, որ իր ապրած այրում էլ աղբյուր բխի և այն լինի ականջացավի դեղ։ Աստծու կամքով կատարվել է ճգնավորի երկրորդ խնդիրքը ևս, և սկսել է բխել Ականջացավի աղբյուրը։

• **Վարդաշենքի աղբյուր** (աղբյուր)։ Մի հարուստ աղջիկ ու աղքատ տղա սիրահարվում են և ուխտում՝ միասին ապրել, միասին մեռնել։ Աղջկա ծնողները գտնում են մի ուրիշ, հարուստ փեսացու։ Նշանդրեքից մի քանի օր առաջ աղջիկը մոր և տան հարսների հետ գնում է Վարդաշենք կոչված բլրաձև բարձունքը՝ դաշտային աշխատանք կատարելու։ Այստեղ նա գտնում է իր սիրած տղային և առանձնանում նրա հետ։ Մայրը տեսնելով նախատում ու անիծում է նրանց։ Տղան ու աղջիկը հուսահատ դիմում են աստծուն և խնդրում իրենց վարդի թփեր դարձնել։ Անմիջապես կատարվում է նրանց խնդիրքը։ Աղջկա մայրը վրեժխնդրությամբ լցված դիմում է չար ոգիներին, որոնց կամքով երկու վարդենիների արանքում մի փուշ է բուսնում, խանգարելով նրանց մոտենալ իրար։ Սիրահարների արցունքներից Վարդաշենքում աղբյուր է գոյանում, որին բուժիչ հատկություն է վերագրվում։

• **Ռաֆֆու աղբյուր** (աղբյուր)։ Տարիներ առաջ Ռաֆֆին գալիս է Դահրավ գյուղը՝ տեղի քաջերի պատմությունը գրելու։ Շրջում է տնետուն, հարց ու փորձ անում ծերերին, կարդում մամռակալած քարերի գրերը։ Ռաֆֆու խնդրանքով գյուղացիները շուռ են տալիս Աբրահամենց այգու մոտ ընկած հայկական սալ քարը՝ նրա վրա եղած գրերը կարդալու համար։ Ռաֆֆու մեկնելուց հետո, այդ սալ քարի տեղից սկսում է առատ ջուր բխել։ Դահրավցիների ուրախությանը չափ չի լինում, քանի որ մինչ այդ ջուր բերելու համար նրանք ստիպված էին իջնել մոտակա ձորը։ Այդ ջուրը հիմա էլ կա և կոչվում է Ռաֆֆու աղբյուր։

• **Քալոյի աղբյուր** (աղբյուր)։ Ասում են, թե այս գյուղն առաջ աղբյուր չի ունեցել։ Գյուղացիները տառապել են առանց ջրի և փորձել են մի ելք գտնել։ Քալո անունով մեկի կինը երազ է տեսնում, որ իրենց տնից ներքև հողի տակ աղբյուր կա։ Քալոն մի քանի օր շարունակ փորում է այդ տեղը և գտնում աղբյուրը։ Գյուղը դուրս է գալիս ծանր վիճակից։ Մինչև հիմա էլ կա այդ աղբյուրը և գտնողի անունով կոչվում է Քալոյի աղբյուր։

• **Եղնիկի աղբյուր** (աղբյուր)։ Ավանդության համաձայն՝ ամեն տարի այստեղ մի եղնիկ է եկել ու նստել ջրի մոտ։ Գյուղացիներն այն համարել են աստծու կողմից ուղարկած մատաղացու և մորթել ու միսը բաժանել են իրար մեջ։ Մի անգամ էլ խախտել են այդ կարգը, և միսը վերցրել են միայն երկու հոգի։ Իբր դրանից աստված զայրացել է և այլևս եղնիկ չի ուղարկել, բայց աղբյուրը շարունակել են կոչել Եղնիկի աղբյուր։

• **Լեզգու աղբյուր** (աղբյուր)։ Լեզգիների ժամանակ հայերը փախչում են սարը, օթևան շինում իրենց համար ու թաքնվում։ Սարի վրա մի լավ աղբյուր են գտնում, թփերով ծածկում ու թաքուն օգտվում ջրից։ Այդ աղբյուրը կոչում են Լեզգու աղբյուր։

• **Քոսի աղբյուր** (աղբյուր)։ Ըստ ավանդության՝ քոսախտով (բորոտություն) բռնված մի կռապաշտ գալիս է աղբյուրի մոտ։ Նրան երևում է մի ծերունի և խոստանում է բուժել վերքերը, եթե քրիստոնեություն ընդունի։ Հիվանդը համաձայնվում է։

Ծերունին գավազանով խփում է ժայռին, և այստեղից աղբյուր է բխում: Հիվանդը լվացվում է ու բուժվում: Աղբյուրի անունը մնում է Քոսի աղբյուր:

- **Խազալ կապի աղբյուր** (աղբյուր): Սա զուլալ ու հորդ մի աղբյուր է. մոտը կա «Թաք ծառ» կոչված մի չինարի, որ սուրբ է համարվում: Իշխանա սարի արոտները գնացող տափաստանի քոչվորները իրենց քոչերով, աղբյուրի ջրի հույսով, միշտ եկել են այս կողմերը՝ չորացրել արոտները և թալանել շրջակա բնակիչներին: Քոչվորների ոտքն իրենց կողմերից կտրելու համար՝ Խոտ, Շինուհայր և Քարահունջ գյուղերի բնակիչները հավաքել են իրենց ոչխարների մի տարվա խուզած բուրդը և դրանով փակել աղբյուրի ակը: Զրկվելով ջրից տափաստանի քոչվորները այլևս չեն եկել այս կողմերը և ժողովուրդն ազատվել է նրանց ասպատակությունից:
- **Թոխոպվա աղբյուր** (աղբյուր): Մի կին երեխայի հետ աղոթելու է գալիս այս մատուռը: Աղոթքի ժամանակ երեխան լաց լինելով ջուր է խնդրում: Աղոթքը չընդհատելու համար մայրը խնդրում է աստծուն հագեցնել երեխայի ծարավը: Աստված լսում է նրա խնդիրքը և աղբյուր է բխեցնում մատուռի մեջ:
- **Թարգմանչաց վանքի աղբյուր** (աղբյուր): Մեսրոպ Մաշտոցը այս կողմերում քարոզելիս, գավազանը խփել է քարին ու հրամայել է, որ ջուր բխի: Եվ նրա խոսքով իսկույն բխել է այս աղբյուրը:

2. Հին հավատալիքներ:

- **Անահիտի աղբյուր** (աղբյուր): Ավանդությունն ասում է, թե Աղվանքի Վաչագան թագավորը այս աղբյուրի մոտ հանդիպելով Հացիկ գյուղացի գեղեցիկ ու իմաստուն Անահիտին, սիրահարվել է նրան և այդ օրվանից աղբյուրի անունը կոչվել է Անահիտի աղբյուր:
- **Արճակի աղբյուր** (աղբյուր): Հայկական մի ավանդությամբ իբր Արճակ լճում բնակվող հրեղեն կինը (հարսը) մշտապես այս աղբյուրում էր լողանում, իսկ աղբյուրի ջուրը խմողը բորբոքվում է անարատ սիրով և ձեռք է բերում քաղցր երգելու ունակություն:
- **Արջի աղբյուր** (աղբյուր): Ըստ ավանդության գյուղի անտառից մի արջ դուրս գալով՝ սկսում է բարձրանալ դեպի Դիզափայտի գագաթը: Ճանապարհին խիստ ծարավում է և սկսում ոռնալ: Հանկարծ մի աղբյուր է բխում, որից կուշտ ջուր խմելուց հետո արջը շարունակում է իր վերելքը դեպի Դիզափայտի կատարը, բայց հասնելուց հետո նա կայծակնահար է լինում և տապալվում գետնին: Իբր դրա հետ էլ կապված է աղբյուրի անունը՝ Արջի աղբյուր:
- **«Արտասուքի աղբյուր»** (աղբյուր): Այդ աղբյուրը իբր գոյացել է Հակոբ Մծբնա հայրապետի արցունքներից, երբ նա իր սարկավագներին ծովը նետելու պատճառով լաց է եղել:
- **Բարեհամ աղբյուր** (աղբյուր): Ըստ ավանդության այստեղ էր գտնվում Գր. Լուսավորչի ճգնարանը և իբր նրա հրաշագործությամբ այդ աղբյուրը բխել է ժայռերի խորքից:
- **Յոթն աղբյուր** (աղբյուրներ): Ըստ ավանդության, այստեղ կար յոթ սյուների վրա կառուցված վանք, որը քանդել է Լենկթեմուրը, որից հետո այդտեղից աղբյուր է բխել:
- **Չամչի աղբյուր** (աղբյուր): Ըստ ավանդության մի երիտասարդ իր սիրած աղջկան տեսնելու համար միշտ չամիչ է լցնում գրպանները և գալիս այստեղ ու սպասում նրան: Իբր դրա համար էլ աղբյուրը կոչվել է Չամչի աղբյուր:
- **Սովի աղբյուր** (աղբյուր): Ուներ սառնորակ ու վճիտ ջուր, բայց փոքր հոսանքի պատճառով անվանել են Սովի աղբյուր:

- **Սպիտակ աղբյուր** (աղբյուր): Ըստ ավանդության՝ այս աղբյուրից ջուր է խմել Սասունցի Դավիթը:
- **Գարապայի աղբյուր** (աղբյուր): Ըստ հայկական ավանդության աղբյուրը, որ բխում է քարաժայռի միջից, դուրս է ժայթեցրել Նոյ նահապետի Սեմ անունով որդուն:
- **Վարդենիկի աղբյուր** (աղբյուր); Այս աղբյուրի ջրի մասին ասում են, թե ունի հրաշալի զորություն. ով որ լվացվում է և խմում, մազերը ոսկեզօծվում են և փափկում աբրեշումի պես: Քար ունեցողներն էլ գալիս են, խմում այս աղբյուրի ջրից, որից հետո քարը մաշվում ու ընկնում է:

Այս խմբի մեջ ցանկանում ենք առանձնացնել ավանդությունների շարք, որտեղ նույն անունը կրող վայր ըստ աշխարհագրական դիրքի, տարբեր ավանդություններ ունի.

- **Կաթնաղբյուր** (աղբյուր): Մեսրոպ Մաշտոցը Էջմիածնում վախճանվում է և Վահան Ամատունին համաձայնեցնում է նրան թաղել իր հայրենի Օշական գյուղում: Ավանդությունն ասում է, որ հուղարկավորողները ճանապարհին նեղվելով շոգից ու ծարավից, դագաղն իջեցնում են գետին՝ մի փոքր դադար առնելու: Եվ հանկարծ մի աղբյուր է բխում կաթնահամ ջրով: Ամենքը խմում են, հագեցնում իրենց ծարավը և կոչում՝ Կաթնաղբյուր:
- **Կաթնաղբյուր** (աղբյուր): Ավանդության ասելով իբր այդ աղբյուրի մեջ Տիրամայրը ծորացրել էր իր սուրբ կաթից մի կաթիլ, որի համար էլ աղբյուրը կոչվել է Կաթնաղբյուր:
- **Կաթնաղբյուր** (աղբյուր): Այս աղբյուրի ջրով բուժվել են բորոտները:
- **Կաթնաղբյուր** (աղբյուր): Մայրերն այստեղ ուխտի էին գալիս կաթ ունենալու համար:
- **Կաթնաղբյուր** (աղբյուր): «Սասնա ծռեր» դյուցազնավեպում այս աղբյուրի ջրից խմողների ուժը մեծանում էր մի քանի տասնյակ անգամ:
- **Լուսաղբյուր** (աղբյուր): Ըստ ավանդության մի կույր մարդ այստեղ լվացվելուց հետո բուժվում է, վերականգնում տեսողությունը, որից աղբյուրը կոչվում է Լուսաղբյուր:
- **Լուս աղբյուր** (աղբյուր): Արիստակես հայրապետը Նիկիայի ժողովին գնալիս՝ եղել է այստեղ. աղոթքով ու հրաշքով մի աղբյուր է բխեցրել, որի ջրով մկրտվում և բուժվում են:
- **Լուսաղբյուր կամ օձաղբյուր** (աղբյուր): Ծերացած և հիվանդ օձերը գիշեր ժամանակ գալիս մտնում են այդ ջրի մեջ, բուժվում և երիտասարդանում:

3. Քրիստոնեական սրբերի հետ կապված ավանդություններ:

- **Ս. Հակոբի աղբյուր** (աղբյուր): Ըստ ավանդության՝ գոյացել է ս. Հակոբի արտասուքից: Ջուրը համարվել է սրբազան ու բուժիչ:
- **Հռիփսիմեի աղբյուր** (աղբյուր): Ըստ ավանդության՝ այստեղ ապրել է ս. Հռիփսիմեն, որի անունով էլ կոչվել է աղբյուրը: Ամռանը այստեղ ուխտի էին գալիս հազարավոր մարդիկ:
- **Սուրբ Հակոբի աղբյուր** (աղբյուր): Ըստ հայկական ավանդության՝ այսպես է անվանվել Մասիս լեռան հյուսիսարևելյան լանջին գտնվող նույնանուն աղբյուրի անունով:
- **Վարդապետի աղբյուր** (աղբյուր): Ասում են, թե այս աղբյուրը գավազանի հարվածով բխեցրել է պարտիզակցի Հովհաննես անունով մի մենակյաց ու մաքրաբարո վարդապետ: Դրա համար էլ այն կոչվել է Վարդապետի աղբյուր:
- **Սուրբ Հակոբի աղբյուր** (աղբյուր): Ըստ ավանդության, երբ վնասատու մորեխ կամ թրթուր էր հայտնվում, այս աղբյուրից ջուր էին տանում, ցրում դաշտերում,

որից հետո այդտեղ հայտնվում էին սարյակների երամակները և սկսում ոչնչացնել վնասատուներին:

Մեր համոզմամբ քննությունը ցույց է տալիս, որ հայերենում առատ են «աղբյուր» բաղադրիչով տեղանունները, որոնք հարուստ ու գեղեցիկ բառերի շարքեր կազմելուց բացի անսպառ նյութ են մատուցում ժողովրդական բանահյուսության համար:

Հռիփսիմե Կոստանյան

«ԱՂԲՅՈՒՐ» ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բանալի բառեր՝ աղբյուր, բաղադրիչ, տեղանուն, կազմություն, ավանդություն

Ներկա հետազոտության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել «աղբյուր» բաղադրիչով տեղանունները հայերենում ՝ դասակարգելով դրանք ըստ կազմության, բնույթի, և ցույց տալով դրանց հետ կապված ավանդությունները: «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի հատորներից դուրս ենք գրել տեղանուններ, առանձին-առանձին դասակարգել վերը նշված սկզբունքներով: Եկել ենք այն եզրակացության, որ աղբյուր բաղադրիչով կան և՛ հարադիր ու բարդ բառեր, և՛ հնչյունափոխված տարբերակներ: Դրանցից շատերի հետ որոշակի ավանդույթներ են կապված: Հետաքրքիր է, որ աղբյուր բաղադրիչով տեղանուններով անվանադրվել են ֆիզիկաաշխարհագրական գրեթե բոլոր միավորներն ու բնակավայրերը՝ լեռներ, դաշտեր, լճեր, գետեր, աղբյուրներ, գյուղեր, կամուրջներ, վանքեր և այլն:

Рипсиме Костанян

ТОПОНИМЫ С КОМПОНЕНТОМ «РОДНИК» В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Ключевые слова: компонент родник, составная часть, топоним, состав, легенда

Цель данного исследования – изучить и представить топонимы со словом «родник» в армянском языке, классифицировать их по составу, сущности и показать связанные с ними легенды. Основываясь на словарях топонимов Армении и соседних регионов, мы выбрали топонимы рассматриваемого типа И классифицировали их по вышеуказанным принципам. Интересно, что тононимы с составной частью «родник» называют почти все физико-географические районы: горы, поля, озера, реки, родники, деревни, мосты, монастыри и т.п.

В результате исследования мы пришли к заключению, что топонимы с составной частью «родник» образуются как сложные слова, где встречается и чередование звуков. Необходимо отметить, что с образованием большинства из этих топонимов связаны легенды.

Hripsime Kostanyan

ARMENIAN TOPONYMS WITH THE COMPONENT “SPRING”

Keywords: spring, component, toponym, srtucture, tradition

The aim of the present research is to study and demonstrate toponyms with the Armenian “spring” component and classify them according to their structure, nature and show the traditions related to them. We have written out some toponyms from “Dictionary of Toponymy of Armenia and Adjacent Territories” and have classified them according to the principles mentioned above. It is interesting to note that almost all physical Geographical locations, mountains, fields, lakes, rivers, springs, villages, bridges, temples and other places include the component “spring”.